ԿԱՐԾԻՔ

Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» ԺԲ.00.02 «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ֆինանսական վերահսկողության հասկացության բացահայտմանը, վերջինիս դասակարգմանն ըստ տեսակների եւ ձևերի, ինպես նաեւ ՀՀ-ում պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմնների՝ մասնավորապես, Ազգային ժողովի, Հաշվեքննիչ պալատի, Կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործառույթներին եւ դերին՝ Սահմանդրության 2015 թվականի փոփոխությունների համատեքստում:

Ողջ աշխարհում, առհասարակ, և Հայաստաի Հանրապետությունում, մասնավորապես, ֆինանսական օրենսդրության և համապատասխան ոլորտի հասարակական հարաբերությունների ներկայիս զարգացումների համատեքստում հեղինակի կողմից քննարկված և վերլուծության ենթարկված հիմնախնդիրները չափազանց արդիական են և ունեն գիտագործնական հետազոտության մեծ պահանջարկ: Հիմնավոր են հեղինակի՝ թեմայի արդիականությանը և խնդրո առարկա հարցադրումների հրատապությանը վերաբերող փաստարկները:

Հանրահայտ է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում թե՛ իրավական կարգավորման, թե՛ գործնական հարթություններում առկա են լուրջ խնդիրներ պետական միջոցների անարդյունավետ օգտագործման՝ մասնավորապես, պետական գնումների կազմակերպման ոլորտում: Հեղինակի առաջ քաշած հարցադրումների՝ տեսական վերլուծության վրա հիմնված ամբողջական և համակարգային պատասխանները կօգնեն լուծելու այս ոլորտում առկա մի շարք խնդիրներ:

Հեղինակին հաջողվել է քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ ներկայացնել ինքնուրույն, հիմնավորված դատողություններ, գիտականորեն հիմնավորված հետևություններ, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներառված մի շարք նորմատիվ իրավական ակտերի և (կամ) դրանց առանձին դրույթների կատարելագործման կապակցությամբ օբյեկտիվորեն արդարացված և անհրաժեշտ գործնական առաջարկություններ:

Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումներն ունեն գիտագործնական զգալի նշանակություն և կարող են օգտակար լինել ինչպես առանձին հետազոտությունների, այնպես էլ հայրենական օրենսդրության բարեփոխման համար:

Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի թեկնածուական ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք. այն կազմված է ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը անդրադարձել է ֆինանսական վերահսկողության հասկացության բովանդակության բացահայտմանը, ֆինանսական վերահսկողության խնդիրների ուսումնասիրմանը, որում ներկայացրել է նաեւ տարբեր հիմքերով ֆինանսական վերահսկողության դասակարգումը տեսակների եւ ձեւերի:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների համատեքստում վերլուծել եւ ներկայացրել է Ազգային ժողովի, Հաշվեքննիչ պալատի և Կենտրոնական բանկի տեղն ու դերը պետական ֆինանսական

վերահսկողություն իրականացնող մարմինների համակարգում, ինչպես նաեւ գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող պետական ֆինանսական վերահսկողության առանձնահատկությունները:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը անդրադարձել է ՀՀ ֆինանսների նախարարության, որպես պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմնի դերի բացահայտմանը, ինպես նաեւ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից իրականացվող պետական ֆինանսական վերահսկողության բովանդակության եւ դրա առանձնահատկությունների բացահայտմանը:

Որպես աշխատության ձեռքբերում կարելի է համարել նաև հետևյալ իրողությունները.

- Աշխատանքը շարադրված է պարզ և ընկալելի լեզվով, ինչը վկայում է քննարկվող հիմնախնդիրներին լիարժեք իրազեկվածության, թեմայի վերաբերյալ սեփական դատողությունները մատչելի շարադրելու հեղինակի կարողության մասին:
- Աշխատանքի պաշտպանության ներկայացվող դրույթներում հեղինակը զերծ է մնացել զուտ միայն իրավակարգավորման կատարելագործման առաջարկություններ ներկայացնելուց և աշխատանքի այդ հատվածում ներառել է այն տեսական ընդհանրացումները, որոնք ապագայում կարող են հիմք հանդիսանալ կոնկրետ իրավական կարգավորման նախագծեր մշակելիս: Աշխատանքում պաշտպանության ներկայացվող դրույթները հստակ տարանջատված են եզրակացություններից: Նման պայմաններում հեղինակը զերծ է մնացել աշխատանքի այս երկու հատվածների անհարկի կրկնությունից, ինչը երբեմն հանդիպում է այլ ատենախոսություններում:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ատենախոսությունը՝ ատենախոսության առնչությամբ, այնուամենայնիվ, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1) Ատենախոսության առաջին գլխի՝ «Ֆինանսական վերահսկողության հասկա-

ցությունը, խնդիրները և տեսակները» վերտառությամբ ենթագլխում հեղինակի կողմից բացահայտվում է ֆինանսական վերահսկողության հասկացության բովանդակությունը: Ուսումնասիրելով տեսական գրականության մեջ ֆինանսական վերահսկողության բովանդակության վերաբերյալ արտահայտած տարբեր դիրքորոշումները՝ հեղինակը վերոհիշյալի հիման վրա տալիս է ֆինանսական վերահսկողության ընդհանրական հասկացությունը: Գտնում ենք, որ «ֆինանսական վերահսկողություն» եզրույթի ուսումնասիրությունը և հասկացության սահմանումը ավելի արդյունավետ և ամբողջական կլիներ, եթե հեղինակը նաև բացահայտեր «վերահսկողություն» և «հսկողություն» եզրույթների բովանդային տարբերությունները:

2) Հաշվեքննիչ պալատի կողմից իր լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու հիմնավորմամբ՝ հեղինակն առաջարկել է վարչական պատասխանատվություն նախատեսել Հաշվեքննիչ պալատին անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր չտրամադրելու, ինչպես նաև հաշվեքննության ընթացքին խոչընդոտելու համար: Գտնում ենք, սակայն, որ հեղինակի առաջարկությունը առավելապես պետք է հիմնավորեր նաև համապատասխան վիճակագրության ներկայացմամբ, քանզի կարծում ենք, որ չի կարող նման իրավիճակ լինել, երբ պետական մարմինը չտրամադրի Հաշվեքննիչ պալատին անհրաժեշտ տեղեկատվությունը:

3) Պետական գնումների ոլորտի նկատմամբ պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մարմնի՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կարգավիճակը ուսումնասիրելիս, կարծում ենք, որ առավել համակողմանի եզրահանգումների համար հեղինակը պետք է այս ինստիտուտը համեմատական վերլուծության ենթարկեր՝ հաշվի առնելով արտասահմանման երկրների փորձը: Նման համեմատությունը կօգներ հեղինակին բացահայտելու այս ինստիտուտի իրավական կարգավորման բացերը՝ հաշվի առնելով միջազգային զարգացման միտումները:

4) Ատենախոսությունում հիմնավորվել է, որ պետական գնումների ոլորտի նկատմամբ ֆինանսական վերահսկողությունն իրենից ներկայացնում է իրավասու պետական

մարմինների իրավական նորմերով կանոնակարգված գործունեություն՝ ուղղված պետական բյուջեի միջոցների օգտագործման հիմնավորվածության, ճշտության, նպատակայնության և արդյունավետության ստուգմանը, որի արդյունքում երաշխավորվում է, որ պետական գնման միջոցով ձեռքբերումը կլինի պատվիրատուի կարիքին համապատասխան, հիմնավորված և համարժեք հատուցմամբ, տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Այս համատեքստում, գտնում ենք, որ հաշվի առնելով ներկա զարգացումները, աշխատանքը ավելի շահեկան կլիներ, եթե հեղինակը քննարկեր այն հարցը, որ տնտեսող պետական գնման ապահովումը դեռևս չի նշանակում պատվիրատուի կարիքին համապատասխան և հիմնավորված գնման ապահովում:

Այնուամենայնիվ՝ ներկայացված դիտողությունները հիմնականում կրում են բանավիճային բնույթ և չեն նվազեցնում հետազոտության գիտական արժեքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է փաստել, որ գրախոսվող ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսությունը պատրաստված և կազմված է ատենախոսության ձևավորման պահանջներին համապատասխան: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած 7 գիտական հոդվածներում, սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական զգալի ընդունակություններ, կատարել է բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է պատշաճ մակարդակով գրված, տեսական և գործնական զգալի նշանակություն ունեցող աշ-

խատանք, որի համար ատենախոսության հեղինակը կարող է արժանանալ ԺԲ.00.02-«Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական հայցվող աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու ***Ս. ԲԱԴԱԼՅԱՆ***

3 սեպտեմբերի, 2020 թվական

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Սայադ Բադալյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ ***Հ. ԽԱՉԻԿՅԱՆ***

3 սեպտեմբերի, 2020 թվական